ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

5 ՄԱՐՏԻ
2024 թ.
№ 4 (1120)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՈՐՊԵՍԶԻ ՁԵՐ ՀՈԳԻՆԵՐՈՒՄ ՄՇՏԱՊԵՍ ԾԱՂԿԱԲՈՒՅՐ ԳԱՐՈՒՆ ԼԻՆԻ

Քեզ ոչ թե հույսի ընդունայն խոսքեր՝
Դաշտի ծաղիկներ կուզեի քեզ տալ,
Քեզ ոչ թե դաշտի թոշնող ծաղիկներ՝
Երկնքի աստղեր կուզեի քեզ տալ,
Քեզ ոչ թե մութից դողացող աստղեր՝
Մա՛յր իմ, արևներ կուզեի քեզ տալ,
Քեզ ոչ թե հազար գարնան արևներ՝
Կյանքի ծովերը կուզեի քեզ տալ,
Որ դար ու դարեր քո սիրով անամպ
Լցնեիր կյանքը քո սուրբ սրբությամբ,
Մա՛յր իմ, արևս կուզեի քեզ տալ,
Հավերժությունը ողջ տիեզերքի,
Թեկուզ մի վարդ էլ քեզ պարտք չմնալ,
Ով աստվածություն՝ խիղճ ու արցունքի...

Հովհաննես Շիրազի բանաստեղծական այս խոսքին հազիվ թե հնարավոր լինի ինչ-որ բան ավելացնել: Մոր, կնոջ, աղջկա կերպարին անդրադարձել են գրականության ու արվեստի մեծերը՝ գրելով ոչ միայն գողտրիկ բանաստեղծություններ, այլև ստեղծել համաշխարհային գլուխգործոցներ: Կնոջ առեղծվածն, այնուամենայնիվ, ամբողջությամբ բացահայտված չէ: Բոլոր ժամանակներում այն ներշնչանքի աղբյուր է եղել պոետների ու նկարիչների համար, ստեղծագործական արարումների անսպառ ակունք:

«Գրեթե բոլորիս համար մայրության խորհուրդը Սուրբ Աստվածածինն է: Մայրությունն անձնավորվում, կապվում և հանգում է Աստվածածնի կերպարին, քանի որ Սուրբ Տիրամայրը հենց այն բարձրագույն կետն է, վեհ կերպարը, որի մեջ կարելի է գտնել մարդու առաքինության բոլոր դրսևորումները: Կնոջ կյանքում մայրանալն ու զավակ ունենալը շատ կարևոր իրողություններ են, բայց պակաս կարևոր չէ նաև այդ զավակին մեծացնելը՝ որպես գիտակից քրիստոնյա ու օրինակելի կերպար հասարակության համար: Այդ դժվար ու պատասխանատու աշխատանքի ամենամեծ բաժինը իրենց վրա են վերցնում հենց մայրերը»,-կարդում ենք Արարատյան Հայրապետական թեմի էջում:

Այսօր կարող ենք փաստել, որ թեև Մարտի 8-ի տոնը պաշտոնապես ընդունվել է որպես կանանց իրավունքների պաշտպանության օր, տարիների հետ այն մեզանում վերածվել է մայրերին, կանանց ու աղջիկներին մեծարելու օրվա: Հայ իրականության մեջ մայրության ու գեղեցկության տոնը նշվում է Ապրիլի 7-ին: Կրկնակի տոն, որ Մարտի 8-ից ձգվում է մինչև Ապրիլի 7: Շատերն են այն կարծիքին, որ կնոջը պետք է մեծարել ամեն Աստծո օր, բայց դրան չի խանգարում այն միամսյակը, որ հայ իրականության մեջ արմատավորվել է արդեն քանի տարի:

Արցախի պատերազմն ու արցախցիների բռնի տեղահանումը ինչ-որ չափով ստվերեց մեր տոները. հայ սգավոր մայրերի առաջ այսուհետև մեծ պարտք ունենք, նրանց ցավի առաջ ազգովի պիտի բացենք մեր սրտերը, փայփայենք ու հույս տանք քաջածին մայրերին:

Մեր օրերում ուշադրության կարիք ունեն նաև կրթության ոլորտի կանայք, ովքեր առաքելություն ունեն՝ կրթելու սերունդներին:

Գարնանային այս զարթոնքի օրերին ուզում ենք շնորհավորել հայ մայրերին, կանանց՝ մաղթելով բոլորին խաղաղություն, մտքի ու ոգու արարումներ, սեր և երջանկություն: Իսկ դա պայմանավորված է մեր Հայրենիքի սահմանների խաղաղությամբ, ներքին ու արտաքին տագնապների չեզոքացմամբ, ի վերջո, մեր բոլորի միասնականությամբ, համերաշխությամբ ու իրար հանդեպ հանդուրժողականությամբ: Որպեսզի յուրաքանչյուր աշխատանքային օր հաջողությամբ ու երջանկությամբ լցնի ձեր սրտերը և ձեր հոգիներում մշտապես ծաղկաբույր գարուն լինի:

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
պաշտոնաթերթ

Մանկավարժականում էր ՀՀ-ում Չեխիայի դեսպանը

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանն ընդունեց Հայաստանում Չեխիայի Հանրապետության դեսպանին:

Դեսպանը Մանկավարժական համալսարան էր այցելել անձամբ ծանոթանալու և տեղեկանալու մանկավարժական բուհի կրթական համակարգի որոշ հարցերի՝ կրթութ-

յան ոլորտում հետագա համագործակցության նպատակով: Նրա հարցերը վերաբերում էին ուսանողների քանակին, մասնագիտություններին, շրջանավարտների՝ մասնագիտությամբ աշխատելու ցանկությանը, բակալավրիական և մագիստրոսական կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողներին:

«Համալսարանական համագործակցությունը մշտապես նպաստում է միջազգային փոխհարաբերություններին՝ արժեբանական տեսանկյունից»-ասաց ռեկտոր Սրբուհի Գևորգյանը: Նա դեսպանի հետ հանդիպմանը խոսեց դպրոցի ամրապնդման քայլերի, բուհի բացառիկ մասնագիտությունների և առկա կրթական կարիքների, բնագիտամաթեմատիկական մասնագիտությունների զարգացմանն ուղղված կառավարութ- ➢2

Մանկավարժականում էր Բրիտանական խորհրդի պատվիրակությունը

Մարտի 1-ին Մանկավարժական համալսարան էր այցելել Բրիտանական խորհրդի պատվիրակությունը՝ Բրիտանական խորհրդի հայկական գրասենյակի տնօրեն Ադդե Հովասափյանը, Անգլերեն գլոբալ ծրագրերի ղեկավար Մայքլ Քոնոլը, անգլալեզու ծրագրերի եվրոպական գծով պատասխանատու Կասպր Մեյսը և Եվրոպայի տարածքում կրթական կենտրոնների նախագծերի կառավարիչ Տատյանա Սլիևպչևիչը:

Նրանց ընդունեց ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային հարցերի գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը: Հանդիպմանը մասնակցում էին Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը և Ռոմանագերմանական լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Գոհար Մելիքյանը:

Կողմերն իրենց գոհունակության խոսքն արտահայտեցին տարբեր նախաձեռնություններով առկա համագործակցության շուրջ, ընդգծեցին, որ ➢2

Պրոտոկոլային հուշագիր

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանն ու Հայաստանի Կինոգործիչների միության նախագահ Հարություն Խաչատրյանը Կինոյի տանը կնքեցին համագործակցության հուշագիր:

Հարություն Խաչատրյանը ցավով նկատեց, որ ուսանողները ոլորտով քիչ են հետաքրքրված. ֆիլմեր են նկարում, բայց ֆիլմեր չեն դիտում: Օրվա խորհուրդը՝ հուշագրի ստորագրումը, միտված էր հենց այդ բացը լրացնելուն՝ ուսանողներին մոտեցնել կինոաշխարհին, նրանց ճանաչելի դարձնել կինոարվեստի նորությունները, նաև մասնակիցը դարձնել կինոյի վարպետների գործերին ու վարպետաց դասերի:

Ելույթ ունեցողները կարևորեցին կինոոլորտի զարգացման գործում համագործակցելու նախաձեռնությունը, որով կմեկտեղվեն ջանքերը ուսանողների մասնագիտական գիտելիքների ու հմտությունների զարգացման քայլերում՝ ժամանակակից կինոմշակույթին համահունչ:

Հուշագրով իրականացվելիք համագործակցության շրջանակում Կինոգործիչների միությունը կաջակցի Մանկավարժական համալսարանի ուսանողներին՝ տեսական գիտելիքները գործնական դաշտում կիրառելու, համատեղ կուրսային, ավարտական աշխատանքներ իրականացնելու՝ նրանց ներգրավելով տարբեր կինոնախագծերում:

Միաժամանակ Հայաստանի կինոգործիչների միության անդամների մասնակցությամբ կանցկացվեն գիտաժողովներ, վարպետաց դասեր, փորձի, հմտություններ ու տեղեկատվության փոխանակում:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը լիահույս է, որ հուշագիրն արդյունավետ փոխգործակցության ու կրթական ծրագրերի համատեղ իրականացման սկիզբ կդառնա՝ լավագույնս նպաստելով այս ոլորտի ուսանողների՝ ապագա կինոգործիչների կրթական զարգացմանն ու առաջընթացին:

Մանկավարժականում էր ՀՀ-ում Չեխիայի դեսպանը

➢1 յան քայլերի, շրջանավարտներով աշխատատեղերի համալրմանը նպաստելու և այլ հարցերի մասին:

Երկուստեք խոսակցություն ծավալվեց ժամանակակից սերնդի և կրթության հարցերի շուրջ:

Երկու կողմերն էլ ցավով նկատեցին մանկավարժական կրթության հանդեպ ժամանակակից սերնդի հետաքրքրության նվազումը, գրավչության բացակայությունը. ՀՊՄՀ ռեկտորը դա պայմանավորեց Հայաստանում ուսուցչի կարգավիճակի փոփոխմամբ, ուսուցչի որակական մակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ, ինչու չէ, նաև ցածր աշխատավարձերով: Խոսելով առկա կրթական կարիքների մասին՝ նա միաժամանակ ընդգծեց կիրառվող քայլերի՝ այլընտրանքային մոտեցումների ներդրման, արտերկրում համատեղ հետազոտությունների իրականացման և այլ հարցերի մասին:

Կողմերը կարևորեցին մանկավարժական կրթության զարգացմանը միտված մի շարք գործընթացների անհրաժեշտությունը՝ անհատական զարգացման հաշվառումը՝ բոլոր կրթական գործընթացներում. նյարդաբանություն, մեթոդաբանական մշակումներ, կրթական ծրագրերի լիարժեք վերանայում՝ մանկավարժական հարացույցի վերանայում և արդիական կիրառում՝ տեխնոլոգիապես հագեցած ներազդմամբ, կրթության որակի նշածողի բարձր մակարդակի անհրաժեշտությունը և այլն:

Դեսպանը խոսեց արդի առաջնայնությունների և մարտահրավերների համաձայն չեխական կրթական համակարգի անընդմեջ բարեփոխման մասին՝ նկատելով, որ այդ բարեփոխումները արդյունավետ կլինեն:

Խոսակցություն ծավալվեց չեխական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցության, եվրոպական ծրագրերին մասնակցության շուրջ:

ՀՊՄՀ պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը ներկայացրեց էրազմուս + ծրագրի շրջանակում եվրոպական համալսարանների հետ գործակցությունը, ինչպես նաև բուհի հայ-չեխական կապերը մասնավորապես Պարդուբիցեի համալսարանի հետ, իսկ դեսպանը խոստացավ նպաստել այդ միջազգային համագործակցության ընդլայնմանը Չեխիայի համալսարանների հետ, համագործակցելու համար մատնանշելով նաև Վիշիգրադի հիմնադրամը՝ չորս արևելաեվրոպական համալսարանների հետ (International Vishigrad Fund+):

Հանդիպման ավարտին դեսպանը շրջեց համալսարանի պատմության թանգարանում, ծանոթացավ 100-ամյա բուհի անցած ճանապարհին ու ձեռքբերումներին:

Մանկավարժականում էր Բրիտանական խորհրդի պատվիրակությունը

➢1 դրանց մի մասը 10 տարուց ավելի պատմություն ունի՝ ուղղված անգլերենի դասավանդման, անգլերենի և անգլիական մշակույթի տարածման, ինչպես նաև ներառականության խթանման տարբեր նախագծերի շրջանակներում:

Հավելենք, որ Մանկավարժական համալսարանը համագործակցում է Բրիտանական խորհրդի հետ նախապատրաստական դասընթացներով, ուսուցիչների վերապատրաստման ուղղությամբ, ինչպես նաև տարաբնույթ կարճաժամկետ և երկարաժամկետ տարբեր դասընթացների շրջանակներում: Այս պահին համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետում կամընտրական առարկաների շրջանակում որպես պարտադիր առարկա մտցված է Բրիտանական խորհրդի պաշտոնական դասընթացը: Այն ուսանողներին մատուցվում է անվճար: Դասընթացը ուսուցիչների առցանց համայնքին է ուղղված, իրականում առցանց ուղղորդված խորհրդատվական դասընթացներ են, որոնք օգնում են՝ յուրաքանչյուր կրթամասի (մոդուլի) շրջանակներում անդրադառնալու շատ կարևոր խնդիրների, ինչպես օրինակ՝ գնահատմանը, այլընտրանքային դասավանդման մեթոդներին, գնահատմանը և ռեֆլեքսիային, հոգեբանական մթնոլորտ և դասարանի կառավարման հարցերին, որոնք յուրաքանչյուր մոդուլի շրջանակում բացատրվում են ստեղծագործական տեսանկյունից:

Այս դասընթացը մտցվել է Օտար լեզուների ֆակուլտետի 4-րդ կուրսում և մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերում: Դասընթացը մեզանում ապագա ուսուցիչների համար է:

«Բրիտանական խորհուրդը ողջունեց Մանկավարժականի՝ ապագա ուսուցիչներին նման դասընթաց առաջարկելու նախաձեռնությունը, որովհետև այս դասընթացը ուսուցիչների համար է: Մենք առաջին անգամ Հայաստանում առաջարկել ենք այս դասընթացում ներառել մեր ուսանողներին՝ ապագա մանկավարժներին: Արդեն ավելի քան մեկ կիսամյակ մեր ուսանողները մասնակցում են այդ դասընթացին, և արդյունքը նկատելի է: Բրիտանական կողմը հիացած է մեր ուսանողներով»,-ասում է Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը:

Այս համագործակցության մեջ դեկանը կարևորում է այն հանգամանքը, որ այսպիսով Մանկավարժական համալսարանը կամուրջ է դառնում, որպեսզի ապագա մանկավարժը մտնի Բրիտանական խորհրդի համաշխարհային ցանցի մեջ, և որ ամենակարևորն է, այն ուսուցիչներն մտցնել համաշխարհային միջազգային ցանց, որոնք արդեն ավարտել են և աշխատում են:

«Բայց մենք Մանկավարժականում ունենք վերապատրաստման դասընթացներ աշխատող ուսուցիչների համար, մեր անգլերենի վերապարաստման դասընթացներում արդեն իսկ օգտագործում ենք Բրիտանական խորհրդի նյութերը»,- ընդգծում է Տ. Միքայելյանը:

Բրիտանական խորհուրդը ուրախ է և պատրաստակամություն է հայտնում ոչ միայն տարածելու այս տեղեկատվությունը, այլև մեր բուհի հետ նոր համագործակցային ծրագրեր իրականացնել:

ՀՊՄՀ պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը նշեց, որ Մանկավարժական համալսարանը բարձր է գնահատում Բրիտանական խորհրդի նախաձեռնությունները, որովհետև այս համագործակցությունը բուհի համար ևս մեկ գործիք է՝ կապ հաստատելու ուսանող մանկավարժ-գործող մանկավարժ-փորձագիտական խումբ համայնքների միջև: Բրիտանական խորհուրդը ոչ միայն հարթակ է տրամադրում, այլև գործիքակազմ, ինչպես օրինակ, չափելիությունն ապահովելու, շփման ձևաչափը հստակեցնելու համար:

Պրոռեկտորն ընդգծեց, որ մանկավարժական համայնքին մեր առաջարկած գործիքակազմի կարևորագույն բաղադրիչներից մեկն էլ Բրիտանական խորհրդի միջոցով ձեռք բերված ու մշակված գործիքներն են:

Պատվիրակության անդամները բարձրաձայնեցին, որ Բրիտանական խորհրդի փորձագիտական խումբը պատրաստ է բացելու բոլոր շտեմարաններն ու տրամադրել նոր գործիքները Մանկավարժական համալսարանի համար:

Մանկավարժական համալսարանը Բրիտանական խորհրդի հետ համագործակցում է ներառական կրթության ծրագրերի շրջանակներում, ինչի հետ կապված Տատյանա Սլիևպչևիչը նշեց, որ ուրախ կլինեն ոչ միայն ներառականության շրջանակում մեզ հետ համագործացել, այլև մեզ հետ կիսել բոլոր այն նորամուծությունները, որոնք վերաբերում են ներառականությունը և արվեստը, ներառականությունը և անգլերենի դասավանդումը հարցերի շրջանակներին: Բրիտանական խորհուրդն իր առջև խնդիր է դրել նաև աջակցել նման կարիքներ ունեցող ուսուցիչներին:

Վերապատրաստման դասընթացի հավաստագրեր ստացան

«Առավել որակյալ ուսուցում հանուն առավել բարեկեցիկ ապագայի» միջազգային ծրագրի շրջանակներում վերապատրաստված ուսուցիչները հավաստագրեր ստացան:

Ինչպես հայտնի է՝ ՀՊՄՀ-ի և Ցյուրիխի մանկավարժական համալսարանների միջև համագործակցության շրջանակներում առաջին անգամ կազմակերպվել էր վերապատրաստման դասընթաց, որի համակարգողը ՀՊՄՀ աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանն է, վերապատրաստող դասախոսները՝ Օտտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը, Ռոմանագերմանական լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Սաթենիկ Սարգսյանն ու Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դասախոս Քրիստինե Տանաջյանը:

«Համագործակցային ուսուցում, նախագծային ուսուցում, մոտիվացիա» թեմայով եռափուլ անցկացված մասնագիտական զարգացման դասընթացի յուրաքանչյուր փուլին մասնակցել էր 30-ից ավելի ուսուցիչ, ավարտել՝ 34-ը: Դասընթացի վերջնարդյունքն ամփոփվել էր նախագծային աշխատանք կամ համագործակցային ուսուցման դասով:

ՀՊՄՀ պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը շնորհավորեց վերապատրաստված ուսուցիչներին՝ լիահույս, որ վերապատրաստումն արդարացրել է մասնակիցների ակնկալիքները, և որ վերապատրաստված ուսուցիչները նոր գիտելիքներով և առավել արդյունավետ մեթոդներով կդասավանդեն իրենց աշակերտներին:

«Մի շարք մաղթանքների կողքին՝ ձեզ «սուր աչք» եմ մաղթում՝ տեսնելու ներկայիս սերնդի յուրահատկությունները, գաղափարներն ու արժեհամակարգը: Լիահույս եմ, որ վերապատրաստման ընթացքում ստացած գործիքակազմը կլինի խիստ օգտակար և արդյունավետ»,-ասաց Տիգրան Միքայելյանը:

Սաթենիկ Սարգսյանն էլ նկատեց՝ ցանկացած փոփոխության առանցքում ուսուցիչն է և հենց նրանով է պայմանավորված այդ փոփոխությունների հաջողությունն ու արդյունավետությունը:

Մարին ԱՂԵԿՅԱՆ



Հավաստագրեր՝ մանկավարժական որակավորում չունեցող մասնագետներին

Փետրվարի 27-ին Մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը համալսարանական դահլիճում ողջունեց և շնորհավորեց մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով բուհում իրականացված (30 կրեդիտի) մանկավարժի հավաստագրման կրթական ծրագիրը հաղթահարած, տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող, սակայն մանկավարժի որակավորում չունեցող 86 հավակնորդների:

Տարբեր մասնագիտությունների գծով մանկավարժի որակավորման չորսամյա ծրագրին մասնակցել էին բարձրագույն կրթությամբ տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչներ: Ռեկտորը ՀՊՄՀ-ի կողմից նրանց հավաստագրեր շնորհեց, որով հավաստագիր ստացածներն այսուհետև իրավունք կունենան մասնակցելու երկու անգամ հայտարարված ուսուցչի թափուր տեղի մրցույթին:

Ռեկտորն ընդգծեց, որ Մանկավարժական համալսարանը կարևորում է գործընթացը և 30 կրեդիտի ստացման դասընթացներին մասնակցած ու հավաստագրման փուլը հաղթահարած մասնագետներին՝ հույս հայտնելով, որ նրանք կկարողանան հաղթահարել նաև ուսուցչի թափուր տեղի մրցույթը և կհամալրեն մանկավարժների շարքերը:

Կառույցի ղեկավարը խոսեց մանկության մասին՝ համեմատելով տարբեր տարիների այդ տիրույթը և ընդգծելով հիմնական փոփոխությունները. ներկա ժամանակաշրջանում տեխնոլոգիաների ազդեցությամբ փոխվել է մանկության սուբյեկտը, տեխնոլոգիաները մուտք են գործել ընտանիք՝ բարդ իրաիճակներ ստեղծելով ծնողի և երեխայի հարաբերություններում, իսկ մանկավարժից մեծ հմտություններ է պահանջվում՝ գտնելու դեպի երեխաները տանող ուղիները: Արդյունքում տուժել են շատ գործընթացներ:

Հավաստագրեր հանձնելով՝ ռեկտորն ընդգծեց, որ դրանով չի կտրվում համալսարանի հետ նրանց կապը, որ պետք է մարտահրավերներին դիմակայելու գործում մեկտեղել բոլորի ջանքերը:

Ռեկտորը դժվարացավ ներկայացնել, թե ինչ կլինի սուբյեկտ-սուբյեկտ փոխներգործությունը, երբ արհեստական բանականությունը վերջնականապես մտնի կրթական դաշտ:

Սրբուհի Գևորգյանը շնորհակալություն հայտնեց բոլորին՝ համալսարանի կրթական ռեսուրսին վստահելու և որոշակի ժամանակահատվածում մանկավարժական մեթոդների ուղղությամբ գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու համար, որից հետո լսեց դասընթացների կազմակերպման վերաբերյալ վերապատրաստվածների մտահոգություններն ու առաջարկությունները՝ հետադարձ կապի շնորհիվ վերապատրաստումներն առավել կատարյալ ու անթերի կազմակերպելու համար:

Դիտողություններն ու առաջարկները հիմնականում վերաբերում էին պրակտիկայի ընթացքի որոշ անհամապատասխանություններին, ինչը բարդություններ էր ստեղծել ավարտական ամփոփիչ աշխատանքի իրականացման համար, ինչպես նաև վերապատրաստման գործընթացի խառը ձևաչափին:

Վերապատրաստվածները միաժամանակ իրենց գոհունակության խոսքերն ուղղեցին դասավանդողներին՝ վստահեցնելով, որ Մանկավարժական համալսարանի դասախոսական կազմից շատ բան սովորեցին և անպայման կիրառեն իրենց մանկավարժական պրակտիկայում:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Մասնակցեցին DeSIRe նախագծի մեկնարկային աշխատաժողովին

Կայացավ «Էրազմուս+»-ի «Հայաստանի և Վրաստանի բուհերում 21-րդ դարի աշխատաշուկայի պահանջներին համահունչ փափուկ հմտությունների զարգացում» (DeSIRe) նախագծի պաշտոնական մեկնարկը:

Նախագծի հանդիսավոր բացմանը ներկա էին Հայաստանի, Վրաստանի և եվրոպական գործընկեր բուհերի ներկայացուցիչներ, այդ թվում՝ ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանն ու Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի աշխատակից Գոհար Առաքելյանը:

DeSIRe նախագծի նպատակը Հայաստանում և Վրաստանում ազգային կրթական համակարգերի զարգացման խթանումն է՝ կապված փափուկ հմտությունների վրա հիմնված դասավանդման և ուսուցման մեթոդաբանության, ռազմավարությունների և տեխնոլոգիաների հետ:

Նախագիծը, որում ներգրավված է նաև Մանկավարժական համալսարանը, նպատակ ունի ակադեմիական գիտելիքի և հմտությունների որակի բարձրացման միջոցով բարելավել ուսանողների կարիերայի հեռանկարները, 21-րդ դարի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան խթանել մրցունակությունն ու ձեռնարկատիրական հմտությունները, աջակցել արդյունավետորեն հաղթահարելու մասնագիտական և առօրյա կենսագործունեության մարտահրավերները:

«Հայաստանի և Վրաստանի բուհերում 21-րդ դարի աշխատաշուկայի պահանջներին համահունչ փափուկ հմտությունների զարգացում» (DeSIRe) ծրագիրը համակարգող բուհի՝ Վանաձորի պետական համալսարանի ռեկտոր Ռուստամ Սահակյանն իր խոսքում բարի ընթացք և արդյունավետ գործունեություն մաղթեց նախագծի մասնակիցներին:

Նա շնորհակալություն հայտնեց մասնակիցներին՝ կարևոր նախաձեռնությունը կյանքի կոչելու, մասնագիտական ողջ ներուժը ներդնելու, համալսարանական կրթությունն աշխատաշուկայի պահանջներից բխեցնելու կարևորագույն գործում ներգրավվելու համար:

Պաշտոնական մեկնարկին հաջորդեց աշխատատաժողովը: DeSIRe նախագծի գործընկեր կառույցները առկա և հեռավար ձևաչափով ներկայացրին իրենց աշխատանքային փաթեթները, եղավ հարց ու պատասխան:

-Հանրապետության պարարվեստի ոլորտի զարգացման գործում Մանկավարժականը առաջատար դեր է խաղում,-

ասում է ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարեն ԳԵՎՈՐԳՅԱՆԸ



-Պարոն Գևորգյան, Դուք հաճախակի եք մեկնում շրջագայությունների. ո՞րն է հիմնական նպատակը՝ հայ պարը տանել աշխարհի տարբեր ծագեր, թե՞ ուրիշ խնդիրներ էլ եք լուծում:

-Պարը մշակութային այն դիվանագիտությունն է, որի շնորհիվ պատմում ես քո ժողովրդի պատմության, խնդիրների, ձեռքբերումների մասին, և պարը միակ միջոցն է, որով քարոզում ես. պարը միայն պար չի, քարոզ է, և երբ պարի միջոցով դու սիրելի ես դարձնում քո ժողովրդին, քո երկիրը, տեսնում ես, թե աշխարհի մարդիկ որքան կարիք ունեն այդ մշակույթների միջոցով մարդկանց հետ շփվելու, հաղորդակցվելու: Դրա ամենավառ օրինակը հենց վերջերս Բրազիլիայում էր:

- Անցյալ տարի «Բերդ» պարային անսամբլը Ազգային օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում երկու օր անընդմեջ տոնեց իր հոբելյանական 60-ամյակը: Առաջին անգամ էր այս ձևաչափով հոբելյան նշվում: Որքան տեղյակ եմ՝ «Բերդ» պարային անսամբլի պարողները հիմնականում Մանկավարժականից են...

-Անսամբլի 99 տոկոսը կամ ներկա պահին սովորողներ են կամ շրջանավարտներ, որոնք ընտրում են, պարի կախարդական ուղին և այդ ուղին անցնում «Բերդ»-ի և պարի հետ: Ու եթե պարի հետ՝ պարն էլ ունի հիշողություն, հիշողությունն էլ ունի պատմություն: Նրանք մասն են կազմում այդ պատմության, որի հիմքերը դրվել է 60 տարի առաջ, և հրակայուն աղյուսե պատերի վրա կառուցվել է հայոց պարի անառիկ բերդը, և այդ ոսկեպատ դարպասներով գալիս անցնում են մեր ուսանողները. նրանցից յուրաքանչյուրն իր բաժին կրակն է վերցնում այդտեղից ու տանում, լուսավորում աշխարհով մեկ սփռված հայերին, պարի միջոցով նաև ընտանիքներ են կազմում, զավակներ են ծնվում...

«Բերդ»-ը սովորական կոլեկտիվ չի, ինչպես Հայաստանում գործող հարյուր-հազարավոր կոլեկտիվները: «Բերդ»-ը վերծանում է մեր հին պարը, մաքրամաքուր, ակադեմիական ճշգրտությամբ հանդիսատեսին է վերադարձնում ժողովրդի հավաքած, ժողովրդի կողմից պահպանված, իմ կողմից հավաքագրված այն նյութերը, որոնց մասին քիչ թե շատ պատկերացում կազմելով, օտար հանդիսատեսը պատկերացում է կազմում մեր ժողովրդի կենսափիլիսոփայության, աշխարհայացքի, նիստուկացի, բնավորության գծերի մասին:

-Ձեր ամենահին պարերի ակունքը որտե՞ղ է...

-Ամենահին պարերը՝ հայկական ժողովրդական պարերը, երևի մի քանի հարյուրն են, որ գալիս են նախաքրիստոնեական շրջանից և գնում են դեպի հավերժություն: Ես վերջերս, 60-ամյակի շրջանակում, բեմադրեցի հնագույն պարերի մի ամբողջական շարան հեթանոսական շրջանից. ծիսական, մեհենական, կրոնապաշտական պարերը վեր հանեցի, որը խոր ուսումնասիրության արդյունք էր՝ ժայռապատկերներից, մշակութաբանական, գիտական աշխատանքանքներ:

Ես գտա՝ ինչպես են փառաբանել Աստղիկ դիցուհուն, որովհետև կարդացի, որ նրան ծափերով էին փառաբանում: Լիսիցյանի աշխատանքները նայելիս ես գտա մի փառաբանության պար, որը վերնագրված էր ծափերով պար: Եթե մեր պատմիչները վկայում են, որ Աստղիկ դիցուհուն ծափերով էին փառաբանում, ո՞ւր է այդ պարը... Եվ մենք այդ պարի անունը դրեցինք Աստղիկ դիցուհուն փառաբանող ծափերով պար: Այսպիսով մենք գտանք ծիսական պարը, որով փառաբանում էին Աստղիկ դիցուհուն:

Ինչպե՞ս էին հայերը պարում «Արևագալի պարը». նորից պատմիչների տված տեղեկությունների հիման վրա շարժումները վերականգնեցինք, արևագալի երաժշտություն կար, միացրինք, և դա դարձավ «Արևագալի պար»: Մենք ուսումնասիրեցինք և գտանք՝ ինչ պարեր էին նվիրում Տիր աստծուն, հարսանեկան կոչունքի պարերը վերծանեցինք...

Հենց այդ ծրագրով դեկտեմբերին մենք հանդես եկանք Ամերիկայի Միացյալ Նահանգներում, մասնակիցները բոլորը Մանկավարժականից էին. մի բեմի վրա պարում էին և՛ ամբիոնի վարիչը, և՛ դասախոսը, և՛ ուսանողը՝ երեք սերունդ մեկ բեմի վրա: Դա գալիս էր ապացուցելու դարերից եկող այն ճշմարտությունը, որ մեր մշակույթն անպարտելի է, որ մեր ոգին անպարտելի է...

-Բրազիլիայում Դուք հանդիպեցիք օտարերկրացիների հետ, պարուսուցում կազմակերպեցիք, վարպետության դասեր տվեցիք, իսկ հայ համայնքների հետ հանդիպումներ եղա՞ն: Հետաքրքիր ինչ-որ դիպված կհիշե՞ք:

-Իմ վերջին շրջագայությունը Բրազիլիայում էր. ինձ հրավիրել էր Բրազիլիայի արվեստների ուսուցման կենտրոնը՝ աշխարհի ժողովուրդների արվեստների ուսուցման կենտրոնը, որը հիմնադրվել էր 1993 թվականին՝ Գլաուսիա Ռոդրիգեսի կողմից, ով էլ ինձ հրավիրել էր: 30 տարի շարունակ նրանք հրավիրում են տարբեր ազգերի պարուսույցների, իսկ Սալվադորում ես առաջինն էի, որ կազմակերպեցի հայկական պարերի ուսուցում: Շատ պարզունակ մեթոդներով էի սովորեցնում, որ կարողանան սովորել ու մտապահել: Մեկ շաբաթվա ընթացքում ես ուսուցման շատ պարզ մեթոդով, շաժողական համակարգով նրանց սովորեցրի 7 պար: Նրանք և պրոֆեսիոնալ պարի ուսուցիչներ էին, սովորական և պարի դպրոցների ուսուցիչներ, և՛ պարզապես պարասերներ էին, որ մասնակցում էին մշակութային ձեռնարկների՝ ամեն տարի սովորելով տարբեր ժողովուրդների պարեր: Այս տարի նրանք հայկական պարեր սովորեցին:

Նախ ասեմ, որ Սան Պաուլոյում ջերմ ընդունելության արժանացա Բրազիլիայում ՀՀ պատվավոր հյուպատոս, մեծ բարերար Հիլդա Տիրուհի Բուրմայանի կողմից:

Սան Պաուլոյում ես հանդիպեցի տեղի հայ համայնքի հետ՝ հարցուպատասխանի ձևաչափով, նաև անցկացրի վարպետության դաս: Համազգայինի ընդհանուր միության մեջ գործող պարի խմբի անդամներն էին նաև մասնակցում, որոնց մեջ մի քանի բրազիլիացիներ կային:

Սան Պաուլոյի Հայ բարեգործական ընդհանուր միության կազմկոմիտեի հետ հանդիպմանը համագործակցության եզրեր գտանք և պայմանավորվեցինք, որ մյուս տարի «Բերդ» պարային անսամբլը համերգներով հանդես կգա Սան Պաուլոյում և բրազիլիացիներին կներկայացնի մեր հայկական հինավուրց պարերը: Մենք համերգներով հանդես կգանք և՛ Արգենտինայում, և՛ Ուրուգվայում:

-Ինչպե՞ս կգնահատեք մեր համալսարանում ապագա պարարվեստի մանկավարժների և շրջանավարտների որակական մակարդակը, որով նաև հիմնականում պայմանավորված է հանրապետությունում պարարվեստի ոլորտի զարգացումը:

Կարծում եմ մարզերում ոչ բոլոր պարուսույցներն ունեն մասնագիտական կրթություն: Սա համակարգայի՞ն խնդիր է, որ լուծում է պահանջում:

-Արդեն չորս տասնամյակ է, ինչ մենք հանրապետությունում անցկացնում ենք պարի փառատոններ, որին մասնակցում են վեց տասնյակից ավելի պարային համույթներ: Պետք է առանց ավելոդ համեստության նշեմ, որ Հայաստանում գործող բոլոր բարձր մակարդակի պարային համույթների ղեկավարները Մանկավարժական համալսարանի պարարվեստի բաժնի շրջանավարտներն են: Այդ փառատոններում մշտապես լավագույն են ճանաչվում մեր համալսարանի շրջանավարտների ղեկավարած պարային խմբերը՝ հագուստի ճիշտ ներկայացմամբ, շարժումների համակարգի, պարապատկերների, խեորոգրաֆիայի, դրամատուրգիայի ճիշտ մատուցմամբ, ինչը խոսում է այն մասին, որ պրոֆեսիոնալ պարուսույցի ձեռք է կպել:

Պետք է ընդգծեմ, որ սահմանային շատ գոտիներում ու հեռավոր մարզերում բացակայում է մշակութային քաղաքականությունը. սա հայեցակարգային խնդիր է: Պետք է պարերի ուսուցման ու մատուցման քաղաքականություն մշակվի: Չի կարելի մեկ-երկու ամիս որևէ պարային խմբում պարած կամ աշխարհագրության և այլ մասնագիտության ուսուցիչը պար ուսուցանի այն դեպքում, երբ այստեղ կարևոր է տարիքային առանձնահատկությունն ու հոգեբանությունը: Մենք սովորեցնում ենք՝ ինչպես սովորեցնել, սովորեցնում ենք պարուսուցման դասավանդման մեթոդիկա. ամբիոնը հենց այդպես էլ կոչվում է՝ պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն:

-Պարը Ձեր տարերքն է, որից դուրս Ձեզ հնարավոր չէ պատկերացնել...

Ձեր բաժնի ավարտական հաշվետու համերգքննությունները մշտապես պարային տոնի են վերածվում՝ ամեն տարի ներկայացվելով նոր ու առավել հետաքրքիր խորագրերի ներքո: Ինչպե՞ս է դա հաջողվում Ձեզ և Ձեր ղեկավարած թիմին:

-Սա անսահման նվիրում է՝ ուսանողների նկատմամբ վերաբերմունք, փոխադարձ աշխատասիրություն... Այդ աշխատանքը հնարավոր չէ պատկերացնել, եթե մեր ամբիոնը այդ ստեղծագործական ընթացքը չապահովի: Պետք է անկեղծ լինեմ և ասեմ, որ երբ խոսում ենք «Բերդ» պարային համույթի հաջողությունների մասին՝ պետք է չմոռանանք ասել, որ այդ համալրումն ու ընթացքը ապահովում է Մանկավարժական համալսարանը: Եվ պետք է շնորհակալանքի խոսքեր ուղղել մեր բուհի այն բոլոր ռեկտորներին և ռեկտորատի այն աշխատողներին, որոնք պատասխանատու են մշակույթի համար, որովհետև հաջողություններ-ը պայմանավորված են նրանց մեծ աջակցությամբ:

-Հաջողությունները նաև Ձեր, բոլոր մյուս երախտավորների և նվիրյալների շնորհիվ է...

-Դե, ուրեմն այդ ամենը միասին են հաջողությունն ապահովում: Օրինակ մեր բուհի նախկին ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը հավատաց պարարվեստի թանգարանի ստեղծմանը և համատեղ ուժերով գնացինք այդ ուղղությամբ: Գիտե՞ք որքան այցելուներ ենք ունենում մեր թանգարանում: Այն եզակի է իր տեսակի մեջ, միակն է հանրապետությունում, աշխարհում էլ գոյություն չունի նման թանգարան: Ցյուրիխում կա նման մի բան, որն այնքան էլ կապ չունի պարի հետ: Բազմաթիվ ցուցանմուշներ ունենք, որոնք ցուցադրելու տեղ չունենք: Բայց թանգարանը դարձավ մի սկիզբ, որտեղից էլ սկսում է մեր առաջին կուրսի ուսանողը՝ հասկանալով, թե իր ընտրած արվեստի ճյուղը դեպի ուր է տանում, ինչպիսի պատասխանատվություն է կրում այս միջոցնքով անցնելիս:

-Ուրեմն մենք պետք է վստահորեն բարձրաձայնենք, որ հանրապետության պարարվեստի ոլորտի զարգացման գործում Մանկավարժականը առաջատար դեր է խաղում...

-Այո, Մանկավարժական համալսարանի պարարվեստի ամբիոնը հայկական ժողովրդական պարի զարգացման երաշխավորն է:

-Որպես պարարվեստի երախտավոր և նվիրյալ՝ կասե՞ք ինչպիսի՞ն է հայ պարարվեստի ներկան ու ինչպես եք պատկերացնում ապագան: Ի՞նչը չի բավարարում, կամ ի՞նչ խնդիրներ կան:

-Այնքան շատ խնդիրներ կան պարարվեստի ոլորտի մարդկանց առջև ծառացած: Դա մի առանձին թեմա է: Այսօր դպրոցներում «Ազգային երգ ու պար» առարկան պրոֆեսիոնալ պարուսույցներ չեն դասավանդում: Ինչո՞ւ երգ ու պար, եթե դպրոցներում արդեն վաղուց երգ անցնում են. չի կարող մի դպրոցում լինի և՛ երգեցողության, և՛ երգ ու պարի դասաժամ: Պարը նեղ մասնագիտություն է: Մագիստրատուրայի շրջանավարտը գնում է դպրոց՝ ասում են գնա մեկ շաբաթ կամ մեկ ամիս վերապատրաստվի, որ դպրոցում դասավանդես:

Մեր պարարվեստի ամբիոնի դասախոսական կազմն ամբողջությամբ նվիրվել է մեր պարուսույցների ապագա սերնդի գեղագիտական կրթման ու զարգացման գործընթացին: Ես հասկանում եմ, որ նրանց չի բավարարում իրենց աշխատանքի հանդեպ առկա ֆինանսավորումը, բայց բարոյական խնդիրը այս մշակույթում ավելի շատ է, քան ֆինանսական խնդիրը: Բայց պետք է ինչ-որ տեղ նշեմ, որ մեր դասախոսներն իրենց ֆինանսական խնդիրը լուծում են համալսարանից դուրս. մեր պրոֆեսիոնալ մասնագետները դա ապահովում են իրենց պարի ստուդիաներում ու դպրոցներում, իսկ այստեղ նվիրյալի գործն են անում: Եվ մի ամբողջական թիմ է մեզ մոտ աշխատում, որը լծված է ապագա սերունդներին կրթելու և մեր հայկական պարարվեստը սերունդներին լավագույնս փոխանցելու գործին:

-Իսկ ինչպե՞ս է ընթանում սերնդափոխությունը:

-Մեր ամբիոնը բուհի երիտասարդ ամբիոններից է: Միաժամանակ մեր երիտասարդ պարուսույցները մշտապես և՛ դասական պարարվեստի, և՛ հայկական ժողովրդական, և՛ բալետմայստերի վարպետության առարկայի մանկավարժ վարպետների կողքին են, ընդօրինակում են, սովորում և ինքնուրույն կարող են մտնել լսարան՝ պահպանելով ամբիոնի ավանդույթները: Մեր դասախոսական կազմը ամբողջությամբ համալրում ենք մեր շրջանավարտներով:

Շուտով կնշենք ամբիոնի հիմնադրման 45-ամյակը. դա նաև կդառնա կատարվածի և անելիքների յուրահատուկ ամփոփումը:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ



ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՍԻԼՎԱ ԱՍՐՅԱՆԻ ՆՈՐ ԳԻՐՔԸ

Սիլվա Ասրյանը «Մանկավարժական համալսարան» թերթի տաղանդավոր ու նվիրյալ խմբագիրն է. թերթը այնքան հարազատորեն է ներկայացնում մտավորականի նրա կերպարը: Սիլվան նաև գրականագետ է. սա նշանակում է անձանձիր հետևորդ հայ գրական կյանքին, որովհետև նրա ատենախոսության թեման եղել է մեր օրերի շատ սիրված, իսկական հայրենասեր ու տաղանդաշատ գրող Ռուբեն Հովսեփյանի ստեղծագործությանը:

Սիլվան նաև բանաստեղծ է, և դա երևում է նրա բոլոր գրվածքներից, անգամ գրականագիտական մոտեցումներում նա շարունակում է մնալ բանաստեղծ:

Կարդում եմ Սիլվայի բանաստեղծությունների երկրորդ ժողովածուն, որի խորագիրն է՝ «Եվ բացվում է օրը»: Բանաստեղծուհին բացում է իր օրը ընթերցողի առաջ: Այդ օրը լի է խոհերով, որոնք վերաբերում են հայրենիքի ճակատագրին, Արցախյան խնդիրներին, պատերազմի ծանր կորուստներին, մարդկանց ոչ անկեղծ լինելուն, ընտանեկան կորուստներին, մարդու և բնության փոխհարաբերությանը: Գրքում կան քառյակներ, շատ հաջողված ակրոստիկոսներ, էքսպրոմտներ: Գրքի վերջում դրված է մի ուշագրավ բաժին՝ «Պատանեկան խոհեր» խորագրով:

Հրաշալի բանաստեղծություն է «Երկնքում՝ աստղերի նորօրյա շքերթ» սկսվածքով քերթվածը.

Երկնքում՝ աստղերի նորօրյա շքերթ,
Եռաբլրում՝ դրոշների տխուր ծփանք
Ու հին աստվածների տարօրինակ երթ,
Դարի խռովք անվերջ, հոշոտված կյանք...

Այո՛, հազար անգամ իրավացի է բանաստեղծուհի Սիլվան.

Տառապանքից հողն է նորից տնքում...

Սիլվայի համար, ինչպես ամեն զգայուն մարդու համար, ծանր է իր հարազատների կորուստը, որոնց նկատմամբ ունեցած անանց սերն արտահայտվել է բանաստեղծությունների տեսքով: Ֆիզիկապես չկան մայրը, հայրը, քույրը, որոնց անհետանալը իրական կյանքից մի մեծ ողբերգություն է, սակայն նրանք կան բանաստեղծուհու հիշողության մեջ, կան ամենօրյա կյանքում, գրեթե միշտ իրենց ներկայության պատրանքով: Եվ ձյան սպիտակ փաթիլների մեղմությամբ նա հիշում է իր ծնողներին, ճերմակությունն իր մաքրությամբ առավել սրում է ծնողների նկատմամբ ունեցած կարոտը:

Հին աշխարհից եկող ճշմարտություն է, որ մարդիկ հաճախ շրջապատին չեն ներկայանում իրենց իրական դեմքով, այլ ներկայանում են դիմացիններին ցանկալի դիմակներով: Պատահական չէ, որ երևույթի դրսևորումը կա մեզ հասած պապիրուսի վրա գրված եգիպտական առաջին գրքում: Հին թատրոնը նույնպես դիմակավոր էր, որն արձանագրում էր կյանքի նույն իրողությունը.

Շուրջս հայացքների
Շքերթ է խենթ՝
Դիմակների ներքո՝
Շքեղ ու պերճ,
Թաքցնում են նրանք
սեփական ձեռքերով
իրենց քստմնելի
ողորմությունը խեղճ:

Կա նաև այն իրողությունը, որ մարդը հասարակական դիրքում բարձրանալով, փոխում է մարդուն զարդարող վարքագիծը՝ հայացքը, ժպիտը, շարժուձևը՝ կորցնելով նախկին առավելությունները.

Քեզ կորցնելով անվերջ
ու գտնելով հաճախ
ժամանակի տխուր գորշության մեջ...
Չէ՞ որ ժամանակը...
դե, նա էլ է վազում...
Հոգ չէ՝ ուրիշները
դեռ մնում են կանգնած,
Հոգ չէ՝ ժամանակից ի՞նչ ես ուզում:

Մեր անհանգիստ ժամանակում (ամենուր պատերազմներ, զոհեր, նոր տարածքներ նվաճելու ծարավ, ըմբոստացումներ) բանաստեղծուհին յուրօրինակ ելք է փնտրում սովորական, բարի, բարեխիղճ, աշխատասեր ու անմեղ մարդու համար.

Ո՞ւմ բողոքի՝ Աստծո՞ւն,
Մարդու քնած խղճի՞ն,
թե՞ աշխարհին՝
անտուն ու տիրական...
Մինչդեռ Աստված լուռ է,
Մարդու խիղճը քնած.
(մարդու խիղճը երբեք չի՞ արթնանա...):

Լոռու չքնաղ անկյուններից է պատմական Օձուն գյուղը, որն ունի նաև շատ հին չքնաղ եկեղեցի: Այդ գյուղի հետ կապված գեղեցիկ հուշեր ունի Սիլվան՝ դրանք նրան տանում են մաքուր ու երջանիկ մանկության գիրկը:

Քաջահմուտ լինելով բանաստեղծական հանգին՝ գրքում Սիլվան զետեղել է ակրոստիկոսի հաջողված օրինակներ.

«Ակրոստիկոս Սոնային».

Սերը թող այսօր ծաղկի քո հոգում,
Որ դու լույսի հետ ելնես ճախրանքի,
Նոր արև բացվի սրտիդ երկնքում,
Աստղային գույներ՝ լուսավոր կյանքի:

Սիլվա Ասրյանի «Եվ բացվում է օրը» բանաստեղծական ժողովածուի առաջաբանը գրել է գրող, հրապարակախոս, թարգմանիչ, Ֆրիտյոֆ Նանսենի լուսավոր գործի նվիրյալ Ֆելիքս Բախչինյանը՝ իր խոսքով ոգևորելով Սիլվային ու գրքի ընթերցողներին:

Այս գրախոսականը նվիրում եմ Սիլվա Ասրյանին՝ Հայաստանում կանանց տոնի միամսյակի առիթով և սրտանց շնորհավորում եմ ոչ միայն նրա տոնը, այլև համալսարանի բոլոր հրաշալի կանանց:

Համաշխարհային բանկի փորձագետի դասախոսությունը

Համաշխարհային բանկի փորձագետ, մոնիթորինգի և գնահատման մասնագետ Մարիա Արիանոն, ով այս օրերին Հայաստանում է Համաշխարհային բանկի ծրագրերից մեկի մոնիթորինգի և գնահատման նպատակով, Մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի հրավերով այցելեց Մանկավարժական համալսարան՝ դասախոսությամբ հանդես գալու ապագա սոցիոլոգների համար:

Նրա դասախոսությունը վերաբերում էր ծրագրերի մշտադիտարկմանն ու գնահատմանը: Փորձագետը դասախոսներին և ուսանողներին ներկայացրեց մշտադիտարկման անհրաժեշտությունը, ծրագրերի գնահատման դրդապատճառներն ու ձևերը, գնահատման ընթացքում առաջադրվող ցուցանիշներն ու դրանց կիրառումը:

Մարիա Արիանոն ընդգծեց՝ եթե որևէ ծրագիր են անում, ապա մեկ տարի անց անդրադառնում են արդյունքներին: Նա մանրամասնեց՝ ինչպես պետք է հասնել դրան, օրինակներով տարբերակեց վերջնական տվյալներն ու արդյունքները, ներկայացրեց բոլոր ոլորտների համար կիրառելի ընդհանուր մոտեցումներն ու մեթոդները:

Փորձագետն առանձնացրեց գործունեության ընթացքի քայլերը՝ սահմանել ցուցանիշներ՝ արդյունքները գնահատելու համար, ապա բացեց «SMART» հապավումը:

Տարբեր ծրագրերի մշակման ժամանակ անհրաժեշտ է սահմանել ցուցիչներ՝ հասկանալու համար՝ որքանով են դրանք չափելի ու գնահատելի: Դրա համար պետք է նախ ընտրել որևէ կոնկրետ ոլորտ: Ցուցանիշների սահմանումից ու արդյունքների գնահատումից զատ կան այլ նպատակներ ևս. երբեմն օգտվում են այլ հարակից ցուցանիշներից, այսինքն աշխատում են տարբեր ցուցանիշներ իրար համադրելով:

Գործընթացը ենթադրում է նաև որոշակի իրավիճակային մարտահրավերներ, և հարցը պետք է դիտարկել տվյալների ճիշտ հավաքագրման տեսանկյունից. օրինակ, զգույշ պետք է լինել ֆինանսական տվյալների ճիշտ հավաքագրման, տվյալները վերլուծողի կամ դրանք զեկուցողի հարցում:

Զեկուցողն ընդգծեց՝ մոնիթորինգն ու գնահատումը կապված են իրար հետ և սերտորեն համագործակցում են, խոսեց մոնիթորինգի և գնահատման սահմանումների մասին, որոնք տարբեր իրավիճակներում երբեմն բախվում են դժվարությունների, և նման դեպքերում կիրառվող նորարարական մոտեցումների մասին, ինչպես, օրինակ, պատերազմական իրավիճակում գտնվող Գազայի հատվածում, որտեղ կիրառում են մասնակցային մոնիթորինգ և գնահատում:

Համաշխարհային բանկի փորձագետը հանգամանորեն խոսեց որակական, քանակական, գործընթացային մարտահրավերների ու ազդեցության գնահատումների մասին:

Հանդիպումն ավարտվեց հարց ու պատասխանով. դրանք վերաբերում էին ռիսկերի գնահատմանը, Արցախից տեղահանվածներին աջակցման արդյունքների գնահատման և այլ հարցերի:

Ելույթ ունեցավ Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ Գայանե Խաչիկյանը, ով փաստեց, որ բազմաթիվ ծրագրերի ղեկավար, մոնիթորինգի և գնահատման մասնագետ, մի շարք հոդվածների հեղինակ Մարիա Արիանոյի դասախոսությունն իսկապես ուսանելի էր ու հետաքրքիր ապագա սոցիոլոգների համար:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Անդրադարձան «սթրես» թեմային

Սերունդների կապը կրթական գործընթացներում երբեք ինքնանպատակ չի լինում, ավելին, այն մասնագիտական կողմնորոշմանը նպաստող համագործակցություն է, որի արդյունքում մեծանում է գիտելիքների և տեղեկույթի ձեռքբերման հնարավորությունը: Դա առավել նկատելի ու արդյունավետ է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Այս անգամ բուհի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողների հետ հանդիպման էին եկել համալսարանի ավագ դպրոց-վարժարանի անգլերեն ենթահոսքի 11-րդ դասարանի սովորողները: Բաց դասի ձևաչափով վարժարանի սովորողները վարժ անգլերենով ներկայացրին «սթրես» երևույթը և նրա դրդապատճառները: Եվ քանի որ այն անմիջականորեն առնչվում է հոգեբանական խնդիրներին՝ հանդիպումը հենց այդ ֆակուլտետի ուսանողների հետ էր կազմակերպվել:

Վարժարանի 11-րդ դասարանի սովորողները բաժանվել էին խմբերի, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում էր՝ ինչ է սթրեսը, որոնք են այն առաջացնող պատճառները, սթրեսի ազդեցությունը տարբեր օրգան համակարգերի վրա, այն հաղթահարելու միջոցները և այլն:

Նրանք անդրադարձան սթրեսին առնչվող ամենատարբեր խնդիրների, այնուհետև ուսանողական լսարանին հարցեր առաջադրեցին ներկայացված թեմայի վերաբերյալ: Վերջիններս էլ հոգեբանների տեսանկյունից մոտեցան թեմային՝ նախ սթրեսն առանձնացրին դեպրեսիայից եթե առաջինի դեպքում ընտանիքը կամ որևէ առողջ միջավայր կարող է դրական ազդեցություն ունենալ անհատի վրա, ապա դեպրեսիայի դեպքում արդեն պետք է դիմել մասնագետին: Աշակերտ-ուսանող համատեղ քննարկեցին ճգնաժամային իրավիճակները՝ փորձելով առանձնացնել ամենածանր ու ամենախոցելի տարիքային խումբը:

Պետք է ընդգծել, որ վարժարանի սովորողներն առավել ակտիվ էին, ապագա հոգեբանները՝ ավելի զուսպ, որպեսզի որպես մասնագետներ իրենց ելույթներով ճնշում չգործադրեն կրտսեր ընկերների վրա:

Ելույթ ունեցան ֆակուլտետի դեկան Ռուզան Պետրոսյանը, դեկանի տեղակալներ Լիդա Արամյանը, Սոնա Մակիչյանը, անգլերենի ուսուցչուհի Աննա Մայիլյանը:

ՀՊՄՀ ուսումնական հարցերի գծով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը համոզմունք հայտնեց, որ վարժարանի սաները և ուսանողները ապագայում կայացած մասնագետներ են դառնալու նաև նման համագործակցային նախագծերի շնորհիվ: Միայն թե պետք է հասնել զարգացումների հետևից, ժամանակը բաց չթողնել:

Պրոռեկտորն այն տեսակետը հայտնեց, որ հոգեբանությունը շատ կարևոր ու բարդ մասնագիտություն է, որը պետք է ավագ դպրոցներում ուսուցանվի որպես պարտադիր առարկա:

Դեկանը շնորհակալություն հայտնեց վարժարանի սաներին՝ թեման անգլերենով անկաշկանդ ներկայացնելու համար, ապա խոսեց հոգեբանի բարդ մասնագիտության մասին, որը շատերն ընտրում են՝ չիմանալով ինչ է իրենից ներկայացնում այն և հոգեբանության դաշտ մտնելուց հետո միայն հասկանում, թե որքան խորն գիտելիքներ են պետք մարդու հոգեկանի խնդիրները հասկանալու համար: Չէ՞ որ բժիշկը բուժում է հիվանդությունը, իսկ հոգեբանը՝ մարդու հոգին:

Անգլերենի ուսուցչուհի Աննա Մայիլյանն ասաց, որ դա անգլերենի մի սովորական դաս էր, որը կարողացան հասունացնել և վերածել նախագծի՝ համատեղ բաց դասի ձևաչափով կազմակերպելով կրտսեր և ավագ սերունդների համագործակցությունը: Եվ նման նախագծային ձեռնարկներ էլի կլինեն:

Դեկանի տեղակալ Լիդա Արամյանի կարծիքով՝ հեշտ չէր հոգեբանության դաշտում հոգեբանների հետ խոսելը: Սակայն հետաքրքիր ձևաչափով վարժարանի սովորողները փորձեցին վարպետության դաս անցկացնել:

Հաջորդ անգամ ուսանողները կփորձեն գիտական, մասնագիտական իրենց գիտելիքները փոխանցել իրենց փոխարինող սերնդին: Համատեղ դասը մասնագիտական կողմնորոշմանը միտված ուղերձներ ուներ, միջառարկայական կապի ու հաղորդակցման դրսևորում, որի լավագույն խորագիրը «սովորեցնելով սովորելն էր»:

«Ինչ վերաբերում է սթրեսին՝ այն մեր կյանքում բոլորիս հետ քայլող ու դժվար հաղթահարելի մի երևույթ է, որն անընդհատ բացահայտման կարիք ունի: Իսկ հոգեբանը միշտ պետք է պատրաստ լինի հաղորդակցվելու»,-ամփոփեց Լիդա Արամյանը:

Դասը շարունակվեց. հոգեբան ուսանողները դասախոս Գայանե Գրիգորյանի ղեկավարությամբ անդրադարձան սթրեսի ֆիզիոլոգիական և հոգեբանական մեխանիզմների առանձնահատկություններին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Տասներկուամյա քիմիկոսը

«12 տարեկան եմ, բայց մասնակցում եմ մանկավարժական համալսարանի դասերին՝ քիմիայի բաժնի ավագ կուրսերի ուսանողների հետ»,- ՀՊՄՀ լրագրության բաժնի 4-րդ կուրսի ուսանողների հետ հանդիպման ժամանակ ասաց փոքրիկ Ալեքը:

Մինչ իր դասընկերները ծանոթանում են Մենդելեևի քիմիական տարրերի պարբերական աղյուսակին, Ալեք Մանվելյանը փորձեր է անում, ուսումնասիրում քիմիական նյութեր, միացություններ ու նույնիսկ դեղ ստեղծում:

«Դեղագործական քիմիայում առաջին մեծ փորձն եմ անում, դասախոսիս հետ քննարկել և ստեղծում եմ իմ դեղը, որը հակաալերգիկ ազդեցություն ունի»,- նշեց Ալեքը:

Սկզբում Ալեքի հայրը դեմ էր որդու քիմիայի հանդեպ ունեցած հետաքրքրությանը, որովհետև «տանը եղած ամեն ինչ պայթեցնում էի,-պատմում է Ալեքը,- հետո որ սկսեցի դասերի հաճախել համալսարանում, և հիմնականում այնտեղ էի անում փորձերը,դրա համար ամեն ինչ հեշտացավ և հայրս մտափոխվեց»:

«Մինչև 9 տարեկան սիրում էի նկարել, հետո ծանոթացա և համացանցի միջոցով բացահայտեցի ու սիրեցի քիմիան, թեպետ ֆիզիկա և կենսաբանություն նույնպես ուսումնասիրում եմ»,- նշում է նա:

Բնական գիտություններ ուսումնասիրելիս Ալեքը համացանցում տեսնում է «Հաջողության բանաձև» հաղորդաշարի քիմիային նվիրված թողարկումը, և հենց այդտեղից էլ սկսում է հետաքրքրվել քիմիայով: Ապա կապ է հաստատում ստեղծագործական խմբի հետ և գալիս մանկավարժական համալսարան:

«Հաջողության բանաձև»-ը դիտելուց հետո Ալեքը զանգեց համալսարան, խնդրեց՝ հանդիպում կազմակերպել քիմիայի դասախոսների հետ»,- պատմում է ՀՊՄՀ-ի Լրատվության և հանրության հետ կապերի կենտրոնի ղեկավար Դիանա Մարկոսյանը և հավելում, որ Ալեքը շատ հետևողական է և իր նպատակին հասնելու համար ամեն ջանք գործադրում է: Այսօր նա 3-րդ կուրսի ուսանողների հետ մասնակցում է դասագործընթացին, անում փորձեր, տալիս կոմպետենտ հարցեր, անգամ ուղղում ուսանողների սխալները:

Ծնողների և հարազատների շրջանում քիմիայի մասնագետներ չունի, բայց ինքնակրթման միջոցով հասկացել է՝ ինչ սարքեր ու գործիքներ են անհրաժեշտ գիտափորձեր կատարելու համարգ մի մասը ձեռք է բերել, մի մասը ինքնուրույն պատրաստել:

«Դպրոցում օրական ունենում եմ 7 դաս, իսկ տանը դասապատրաստմանը տրամադրում եմ կես ժամ: Ընդհանրապես, ամեն ինչ անում եմ ինքնուրույն, համալսարանում էլ հասկանամ-չհասկանամ՝ դասախոսներին չեմ ասի՝ նորից բացատրեք. չեմ սիրում, որ ինձ օգնում են»,- ընդգծեց նա:

Դպրոց գնում է այն գիտակցմամբ, որ պարտավոր է դասապրոցեսին համահունչ քայլել. «Հետո ինչ, որ համալսարանում դասի եմ նստում, ես 7-րդ դասարանցի Ալեքն եմ»,- խոստովանում է Ալեքն ու անկեղծանում՝ ընկերներին ու հեռախոսին շատ ժամանակ չի հատկացնում, որովհետև 2 տեղ սովորելուց զատ, իր սենյակում, որը վերածել է լաբորատորիայի, փորձեր է անում:

Ալեքը գիշերները տան ձեղնահարկում է զբաղվում այն ամենով, ինչը տանը երբեք չի հանդգնի անել, կատարում է փորձեր, դիտարկումներ և այլն. «Մի օր ուզում էի ջրից շարժիչ աշխատեցնեի, բայց Նոբելի պես թանկ վճարեցի. երկու շաբաթ ձեռքերս կապված մնացին, որովհետև այրել էի, բայց ծնողներիս ասացի, որ տաք ճաշ եմ թափել»,- ծիծաղելով պատմում է նա:

«Սենյակիս դռանը գանգի նկար եմ փակցրել, որ վախենան չմտնեն, այնտեղ ունեմ նկարելու, բույսերի անկյուն, ինչպես նաև լաբարատոր փորձարկումների համար նախատեսված հատված»,- ասաց նա: Ալեքը այժմ մտածում է տնից դուրս սենյակ ունենալու և այն լաբորատորիայի վերածելու մասին, որպեսզի իրենց տուն հյուր եկած երեխաները չմտնեն իր սենյակ: «Ես երբ տանն եմ, սենյակս անվտանգ է, բայց երբ տանը չեմ ու գալիս եմ՝ զգում եմ ազոտի կամ աղաթթվի հոտ, հասկանում եմ, որ կողմնակի մարդիկ են մտել սենյակ: Մի անգամ էլ ամենաթունավոր գազերից մեկով էին լցրել սենյակս, հազիվ օդափոխեցի ու մի կերպ մաքրեցի տարածքը»,- պատմում է Ալեքը:

«Մարդկանց հետ հեշտ եմ կարողանում լեզու գտնել, հասկանում եմ, որ տարբեր հետաքրքրությունների տեր մարդկանց հետ պետք է տարբեր ձևով շփվել»,- նշում է 12-ամյա «քիմիկոսը»:

Ի դեպ, Ալեքը ազատ ժամանակ բանաստեղծություններ և ինքնակենսագրական գիրք է գրում: Իսկ մի գիրք արդեն տպագրել է՝ «Կյանքի մեխանիկան»:

Իսկ ապագայում ցանկանում է իր կրթությունը շարունակել մանկավարժական համալսարանում: Իրեն տեսնում է դեղագործական քիմիայի ոլորտում, ինչը համարում է մարդասիրական և շատ կարևոր առաքելություն:

Ալեքին ճանաչողները վստահ են, որ դեռ շատ առիթներ են ունենալու նրանով հպարտանալու:

Սուսաննա ՆԵՐՍԵՍՅԱՆ
Սյուզաննա ԽԱՌԱՏՅԱՆ
ՀՊՄՀ Լրագրության բաժնի 4-րդ կուրսի ուսանողներ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՐՈՂԻ ՀԵՏ

«Հայոց աշխարհում կան գերաստղեր և աստղեր, որ միասին լուսավորում են մեր մայրենի մշակույթի ճանապարհը: Դժվար է Նարեկացի, Քուչակ ու Սայաթ-Նովա, Թումանյան, Իսահակյան, Տերյան, Շիրազ, Սևակ ու Սահյան ունեցող ստեղծագործ ժողովրդի մեջ բանաստեղծ կոչվել». իրեն նվիրված միջոցառման ընթացքում համեստորեն ասում է Սոկրատ Խանյանը՝ իր խոսքն ավարտելով հիասքանչ ասմունքով:

Օրերս լրացավ բանաստեղծ, գրականագետ, մանկավարժ, Արցախի պետական համալսարանի հայ գրականության ամբիոնի երկարամյա վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Սոկրատ Խանյանի ծննդյան 94-ամյակը: Բանասիրական ֆակուլտետը մեծարանքի ցերեկույթ էր կազմակերպել անվանի արցախցու մասնակցությամբ:

Ֆակուլտետի դեկան պրոֆեսոր Աշոտ Գալստյանը բացման խոսքում կարևորեց բանասիրականի ուսանողների համար այսպիսի հանդիպումների կազմակերպումը:

Ֆակուլտետի փոխդեկան դոցենտ Ն. Խաչատրյանի առաջնորդությամբ ուսանողները ներկայացրին Ս. Խանյանի կյանքի, գիտամանկավարժական գործունեության հիշարժան պահերը, ասմունքեցին բանաստեղծի ստեղծագործություններից՝ ընդմիջելով ելույթները երաժշտական գեղեցիկ կատարումներով:

Ն. Խաչատրյանը, ինչպես նաև Արցախի պետական համալսարանի գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ դոցենտ Նոնա Դավթյանը գրականագիտորեն վերլուծեցին Ս. Խանյանի գործերը: Նրա հետ անցած ճանապարհի հետաքրքիր հիշողությունները ներկայացրին պրոֆեսորներ Աելիտա Դոլուխանյանը, Սուրեն Դանիելյանը, Էդվարդ Մկրտչյանը, ասպիրանտ Հովհաննես Սարգսյանը: Միջոցառումն ավարտվեց Սոկրատ Խանյանի «Մեր հողը» բանաստեղծության հիման վրա ստեղծված նոր երգի պրեմիերայով:

Փետրվարի 28-ին Սկզբնական կրթության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի 3-րդ կուրսի ուսանողների ուժերով և մասնակցությամբ, այլև Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Լիլիթ Տեր-Գրիգորյանի ղեկավարությամբ կազմակերպված փոքրիկ գիտաժողովն ուներ «Հայկական էպոսը և հայոց լեզուն որպես ազգային ինքնության պահպանման ու փոխանցման միջոցներ» խորագիրը: Ինչպես հայտնի է դառնում խորագրից, գիտաժողովի թեմաներն ունեին երկու ուղղվածություն՝ գրական՝ նվիրված հայկական էպոսի ուսումնասիրությանը, և լեզվական՝ նվիրված դարձվածքներին, որ բյուրեղացումներն են հայի պատկերացումների, աշխարհընկալման ու լեզվամտածողության, և նորագույն փոխառություններին:

Էպոսի ուսումնասիրությունը նպաստակ ուներ բացահայտելու հայ ժողովրդի քրիստոնեական ինքնությունը՝ հիմնավորելով, որ հայը միայն այն ազգը չէ, որն առաջինն է ընդունել քրիստոնեությունը, այլ այն ազգը, որ կրողն է եղել այդ արժեհամակարգի՝ քրիստոնեական բարոյականության ու գաղափարախոսության, որոնք շաղախված են եղել ժողովրդի մտածողությանն ու կյանքին:

Բոլոր զեկուցումները հագեցած էին աստվածաշնչական մեջբերումներով, որոնք էլ ավելի համոզիչ ու հիմնավոր էին դարձնում էպոսից քաղված փաստարկները:

Հիշելով Ֆրանսիացի հայտնի գրող Անտուան դը սենտ Էքզյուպերիի «Միջնաբերդ» ստեղծագործությունը, որը հեղինակը ստեղծել էր Երկրորդ աշխարհամարտի տարիներին՝ ցանկանալով մի անառիկ «միջնաբերդ» կառուցել մարդկանց հոգիներում՝ նրանց վերադարձնելով վաղուց կորցրած հոգևոր արժեքները՝ Լ. Տեր-Գրիգորյանը կարևորեց էպոսի նմանօրինակ ուսումնասիրությունը՝ այսօր մեր սերունդներին հայ պահելու համար նրանց հոգիներում մի անառիկ միջնաբերդ կանգնեցնելու՝ իրենց քրիստոնեական ինքնությունը վերագտնելու տեսանկյունից:

Ուսանողները հանդես եկան անհատական և խմբային զեկուցումներով՝ դրսևորելով ինչպես ինքնուրույն գիտական աշխատանք կատարելու, այնպես էլ համագործակցաբար աշխատելու կարողություններ:

Վստահ ենք, որ այս նախաձեռնությունը կունենա շարունակություն և կդառնա ավանդույթ:

Հայ ժողովրդի՝ որպես քրիստոնեական բարոյականության ու գաղափարախոսության կրողի արտացոլումը «Սասունցի Դավիթ» էպոսի «Սանասար և Բաղդասար» ճյուղում

«Սասունցի Դավիթ» էպոսը ժողովրդական այնպիսի ստեղծագործություն է, որը ճշմարտացիորեն և բազմակողմանիորեն արտացոլում է ժողովրդի կյանքն ու պայքարը, նրա նվիրական ձգտումներն ու սպասելիքները. էպոսը ժողովրդական հոգեբանության կրողն ու բացահայտողն է...

Ժողովրդական էպոսի և յուրաքանչյուր ճյուղի դյուցազնական կերպարների զանազան վարքային դրսևորումներով արտահայտված են հայոց ազգային ոգուն բնորոշ գծերը, հայոց մշակութային առանձնահատկություններն ու արժեհամակարգի առանձին տարրերը: Յուրաքանչյուր հերոս ժողովրդի էությունից է կերտվել, վեր հանվել նրա հոգու ամենախորը անկյուններից, յուրաքանչյուր հերոս բացահայտվում է ժողովրդի էության ուրվագծի մանրազնին ուսումնասիրության ճանապարհով միայն...

Քրիստոնեական բարոյականությունն ու արժեհամակարգը կրող և դրանով իր սերունդներին դաստիարակել ձգտող ժողովրդի ազգային էպոսը ոչ պատահական կերպով արտացոլում է քրիստոնեական գաղափարախոսությանը բնորոշ գծեր: Եվ դրա բացատրությունն ինքնին այն է, որ ժողովրդական ոգին ամուր կառչած է իր արմատներին, և կան ազգային անմար արժեքներ, որոնցով էլ աշխարհին բացահայտվում է հայի դժվար վերլուծելի և ընկալելի տեսակը:

Քննարկենք էպոսի «Սանասար և Բաղդասար» ճյուղում դրսևորված և մեր կողմից բացահայտված այն դրվագները, որոնք փաստում են էպոսում հայի՝ քրիստոնեական գաղափարախոսության կրողը լինելու հանգամանքը:

Յուրաքանչյուր գլուխ սկսվում է «ողորմի»-ներով. սա հավաստումն է այն բանի, որ հայ ժողովուրդը մշտապես ձգտել է արքուն պահել իր ննջեցյալների վառ հիշատակը, նրանց, որոնք թողել են իրենց անջնջելի հետքը հայոց պատմության էջերում, որոնք իրենց կյանքով իսկ իմաստության, նվիրումի կրողն ու օրինակն են եղել սերունդների համար: Սա խորհուրդ ունի արքուն պահելու սերունդների հիշողությունը, ձևավորելու հարգանք, որն էլ հիմք է առաքինի վարքի ձևավորման գործում:

Էպոսի այս ճյուղում ցայտուն դրսևորված է «Մեկի զոհաբերությունը հանուն շատերի» գաղափարախոսությունը, ուսմունք, որի առաջին քարոզիչն իր սեփական օրինակով Աստված Ինքը եղավ: Քրիստոս իր աստվածային էությամբ մարդացավ՝ խոնարհաբար նախընտրելով նվիրաբերվել՝ հանուն բոլորի փրկության: Գիտակցելով անցնելիք ուղու դժվարությունը՝ Աստված ի կատար ածեց մեղավոր և անարժան մարդու փրկության ծրագիրը՝ ընտրելով խաչի ճանապարհը. «Եվ ես իմ անձը սրբացնում եմ նրանց համար, որպեսզի նրանք էլ սրբանան ճշմարտության միջոցով» (Հովհաննես17:19): Աստված անմնացորդ ու վախից ազատ հավատի ուսմունքը տվեց մեզ, ինչը ժողովրդի բարոյական արժեհամակարգի ամուր սկզբունքներից է, իրական քրիստոնյայի հոգևոր ուժի մատակարարը: Եվ ահա այսքան հարազատ գաղափարախոսությամբ էլ ժողովուրդն իր հերոսուհուն է օժտել՝ Ծովինարին, որը գերադասեց սեփական անձի կորուստ՝ հանուն շատերի փրկության և ապահովության. «Ես մեկ ջան եմ, էրթամ կորսվիմ, Քանց մեր Հայաստան էրկիր ավերի...»: Ծովինարը, սակայն, չհրաժարվեց իր հավատքից ու ցանկացավ փրկել իր հոգին կռապաշտ աշխարհում՝ տանելով քահանային, որը կհսկեր իր հոգևոր կյանքի շինության ողջ ընթացքը:

Քրիստոնեականն ու հեթանոսականը չեն ձուլվում, այլ կողք կողքի կերտվում են որպես իրարից հեռու և անկախ գաղափարախոսություններ: Եվ Ծովինարն իր կերպարով վճռում է անխավար ճրագի օրինակը լինել այդ աշխարհում, ինչպես Ավետարանում է ասվում. «Դուք եք աշխարհի լույսը: Լեռան վրա շինված քաղաքը չի կարող թաքնվել: Թող ձեր լույսն այնպես փայլի մարդկանց առջև, որ տեսնեն ձեր բարի գործերը և փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է» (Մատթեոս 5:14,16):

Պատահական չէ նաև Ծովինարի՝ առաքինի այդ հավատացյալի կերպարն այդչափ լուսե արտաքին գեղեցկությամբ կերտվելը ժողովրդի կողմից՝ իբրև աստվածային բարեհաճությունը էության մեջ կրող մարդու արտաքին կողմ:

Քրիստոնեական գաղափարախոսության մեջ անժխտելի հավատամք է այն, որ Աստված անկարելին ու անհնարը հնարավոր է դարձնում նրանց համար, ովքեր հավատում են: Հենց սա է ընկած Աստծո հրամանով աղբյուրի ջրի ստեղծման հիմքում: Ծովինարի հղիությունը սուրբ ջրից էր, Աստվածային սուրբ կամքով, ինչպես Մարիամ Աստվածածնի անսերմն հղիության պարագայում:

Էպոսի այս ճյուղում տեսնում ենք նաև աստվածաշնչյան պատվիրանի պահպանման կարևորության գիտակցումը. սպանությունը համարվում է ժխտելի, հակաքրիստոնեական արարք, և անգամ կռապաշտ Խալիֆան ընդունում է այդ ճշմարտությունը. «Չէ՞ որ էրեխով կնկան վիզ կտրել Մեկ անգամից էրկու՝ մարդ ըսպանել է»:

Սանասարն ու Բաղդասարը մկրտվում են Մելքիսեթ քահանայի կողմից, ստանում Աստծո պաշտպանությունն ու շնորհը և մեծանում օր օրի. Ծովինարի անմեղությունը պարզ է դառնում հենց այս կերպարների Աստվածատուր ուժի և արտասովոր էության շնորհիվ:

Յուրահատուկ խորհուրդ կա նաև էպոսում դրսևորված հետևյալ իրողության մեջ, որ սպասվելիք կամ կանխատեսելի փորձությունը հերոսներին զգուշացվում է սրբերի միջոցով երազներում: Աստվածային յուրատեսակ հուշում է, զգոնության մի ազդակ է կարծես. «Էս գիշեր սուրբ Կարապետ էրազ էկավ ինձի, Որ Խալիֆան ընկեր է նեղութնի մեջ...»:

Հետաքրքիր կերպով է դրսևորված քրիստոնեական արժեհամակարգում առանցքային նշանակություն ունեցող փոխօգնության, ընկերոջ, դիմացինի շահն ու օգուտը սեփականից գերադասելու, գուցե նաև՝ տիրոջ՝ ժողովրդի նկատմամբ ունեցած պատասխանատվության որակները:

Սանասարն ու Բաղդասարը սեփական տունը կառուցելուց առաջ նախընտրում են իրենց հետ եկած ժողովրդի համար ապաստան շինել. «Առաջ շինենք զէդոնց տներ, Ու նոր շինենք զմեր բերդ. էդ խեղճ մարդեր չեն կարնա Արևուն առաջ կենա»:

Սեփական բերդի շինությունն ավարտելիս եղբայրները տան մոտ եկեղեցի են շինում. սրանով ժողովուրդը ներկայացրել է եկեղեցաշինության նկատմամբ իր սերը և, իհարկե, դրա կարևորությունը:

Պատահական չեն նաև այն բոլոր դրվագները, ուր Սանասարն ու Բաղդասարը աղոթքով դիմում են Աստծուն, և յուրաքանչյուր գործ ձեռնարկելիս նրանց համար կարևոր է Աստծո օրհնանքին արժանանալը, ծրագրի հաջողությունն Աստծո բարեհաճ կամքին վստահելը: Աղոթքի զորեղ ուժն էլ նրանց օգնում է գտնել իրենց հարցերի պատասխանները, հավատով ելքեր գտնել դժվարին իրավիճակներից: Միայն հավատով արված աղոթքից հետո է Սանասարին շնորհվում ծովային զորեղ զենքն ու զրահը. «Էլի, յոթ ծունր աղոթք առջև արա. Արժան ըլնիս, քեզ կը հասնի, Դնես վեր քո աջ թևին, որ դարբ չառնի»: Սրանով ներկայացված է քրիստոնեական գաղափարախոսության այն հիմնարար կետը, որ աստվածային շնորհին արժանանալ է պետք և գոհանալ շնորհված յուրաքանչյուր բանի համար: Մեկ ուրիշ դրվագում անգամ կենդանին՝ մարդկային լեզու առած, հորդորում է Սանասարին չվախենալ ու հավատալ Աստծուն. «Սանասար, ինչի՞ կը վախենաս, Դու քո Աստված կանչի»: Այս դրվագով էլ ներկայացված է այն անժխտելին, որ Աստված է Տերն ու Արարիչը բովանդակ աշխարհի. «Որքա՜ն բազմազան են քո գործերը, ո՜վ Տեր, Դու այդ բոլորը իմաստությամբ արարեցիր, երկիրը լեցուն է Քո ստեղծածներով» (Սաղմոս 104:24):

Ավագ սերնդի կենսափորձի և կուտակած իմաստության հանդեպ ունեցած վստահության և հարգանքի դրսևորումն առկա է նաև էպոսի այս ճյուղում: Հայ ժողովուրդը կարևորել է մեծի հանդեպ հարգանքն ու գիտակցել իմաստունի խրատի անհրաժեշտությունը: Հենց այս հիման վրա էլ Սանասարն ու Բաղդասարը շինված բերդի անվան ընտրությունը իմաստուն ալևորին են վստահում:

Հետաքրքիր կերպով է դրսևորված երկու եղբայրների հոգեկան կապը. յուրաքանչյուրը զգում է մյուսի՝ վտանգի մեջ լինելը, հասնում օգնության, ինչը Աստծո աչքին ընդունելի ու հաճելի անձնային որակ է. «Սանասար էլավ դուրս, իրիշկեց էրկինք, Տեսավ՝ Բաղդասարի աստղ խավարեր էր, Իր մտքի մեջ ասաց. «Իմ աղբեր նեղն է»: Ճիշտ է, ընթերցողի առջև ներկայանում է նաև մի դրվագ, ուր Բաղդասարի հոգին խռովվում է նախանձից, սակայն իրավիճակը հարթվում է, և նա ընդունում է ավագ եղբոր մեծությունը: Սրանով ցուցադրվում է քրիստոնեական գաղափարախոսությամբ անընդունելի համարվող նախանձի մերժումը ժողովրդի կողմից: Երկու եղբայրների միասնությունն ու համերաշխությունը դառնում են ընդունելի որակներ էպոսի այս ճյուղի համար:

Հայ քրիստոնյա ժողովրդի անսուտն հավատի արտահայտությունն ու անմարելի արժեքների հանդեպ նրա սերը իրենց դրսևորումն են ստացել էպոսի այս ճյուղի այնպիսի դրվագներում, որտեղ հատուկ նշանակություն է ստանում Աստծո՝ իբրև միակ Արարչի հանդեպ վստահությունը, Տիրոջ առաջ խոնարհումն ու երկրպագությունը(«Գոհանամ քեզնե, էրկնի ու էրկրի ստեղծող, Որ ըզմեզի ու մեր ժողովուրդ Ազատ արիր էն զալումի ձեռնեն»):Պատահական չէ և այն հանգամանքը, որ Սանասարի ու Բաղդասարի տունը գնալով զորանում էր, ընդարձակվում. նրանք լավ տնտեսների օրինակ են, որոնց տրվածը բազմապատկվում է Աստծո շնորհիվ, քանզի իրենք խելամտորեն են տնօրինում իրենց ունեցվածքը:

Խորհրդանշական դրսևորումներ են նաև էպոսի այս ճյուղում ներկայացված դետալները: Առանձնացնենք դրանցից մի քանիսը.

❒Կախարդուհի աղջիկները, որոնք պիտի տեղ հասցնեին Դեղձունի նամակը, աղավնու կերպար են ստանում. «էդ աղջիկներ կախարդ էին. Հավքեղեն հալավ հագան,էղան էրկու սպիտակ աղունիկ»:

❒Աստծո նախախնամությունը հրեշտակի միջոցով կատարվեց, որը աստվածային կամքի և իմաստության խորհրդանիշ է. «Ես եմ հրեշտակն Աստծուն. որ էստեղ նստեր եմ, ճամփաներ կը բաժնեմ...»::

❒Յուրատեսակ սիմվոլների հետ են նաև ասոցացվում սրտի պարզությունն ու մաքրությունը, աստվածային շնորհով լցված լինելը. «Իմ սիրտ՝ քանց էսա դատարկ կուժ սար-սուրբ է. Իմ գլուխ՝ քանց էսա լիք կուժ լափ-լիքն է»: Սրանք արժեքներ են, որոնց ձեռքբերումը բաղձանք է եղել աստվածասեր ժողովրդի համար:

❒Ժողովրդական ընկալման մեջ մեծ կարևորություն ունեցող որակներ կան, որոնք չէին կարող յուրատեսակ արտահայտություն չգտնել ազգային էպոսում, չվերհանվել ժողովրդի կողմից. դրանցից են համբերությունը փորձության մեջ, հյուրասիրությունը, լավատեսությունը: Քրիստոնեական վերոնշյալ գաղափարների համատեքստում ընդգծվում են նաև միասնության, ընտանեկան հարկի ամրության, ջերմության և ապահովության գաղափարները:

Էպոսի հերոսները դեպի լույսն են ձգվում՝ չվախենալով ի ցույց դնել սեփական գործերը: Սա օրինակն է ճրագի, որը վառվում է ու լուսավորում շուրջը, նման է այն մարդուն, որը չի փախչում դեպի խավարը՝ կոծկելով չարի գործերը սեփական: Չէ՞ որ «Ոչ էլ ճրագը կվառեն և կաթսայի տակ կդնեն, այլ աշտանակի վրա, որ լույս տա բոլոր նրանց, ովքեր տան մեջ են» (Մատթեոս 5:15):

Քրիստոնեական բարոյականությունը կրող ժողովրդի ազգային էպոսը չի՜ հեռանում այդքան հարազատ գաղափարախոսության սկզբունքներից. էպոսն արտացոլում է աստվածավախ հայի էության անմարելի արժեքները բոլոր...

Լալա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Սկզբնական կրթության ֆակուլտետ
«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի ուսանողուհի

Նշեցին Թումանյանի ծննդյան հոբելյանը

Փետրվարի 18-ին, հայ մեծանուն բանաստեղծ և գրող, հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանի ծննդյան 155-ամյակի շրջանակներում, ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում հայոց լեզվի թումանյանական դասերին զուգահեռ, մեծ հաջողությամբ կազմակերպվեց համատեղ միջոցառում Մոսկվայի հայկական թատրոնի հետ (գեղարվեստական ղեկավար, Վրաստանի և Ռուսաստանի թատերական գործիչների, Մոսկվայի կինոդերասանի գիլդիայի միության անդամ, դերասան, բեմադրիչ, դրամատուրգ Սլավա Ստեփանյան):

Աշակերտները դիտեցին Հ. Թումանյանի «Քեֆ անողին քեֆ չի պակսիլ» հեքիաթի տիկնիկային ներկայացման առաջնախաղը հայերենով: Նշենք, որ սույն տիկնիկային բեմադրությունը հաղթող է ճանաչվել ՌԴ-ում Նախագահական հիմնադրամի մշակութային նախաձեռնությունների դրամաշնորհային մրցույթում:

Վերոնշյալ միջոցառման ժամանակ աշակերտները, նրանց ծնողները և ուսուցչական համակազմը ներկայացրին Հովհաննես Թումանյանի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված թեմատիկ զեկույցներ, ինչպես նաև ոգևորությամբ ընթերցեցին Վարպետի քառյակներից, հատվածներ բալլադներից, պոեմներից, հեքիաթներից:

Այնուհետև «Վերածնունդ» դպրոցի տնօրեն, մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանը պատվոգիր հանձնեց Մոսկվայի հայկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Սլավա Ստեփանյանին՝ երկարաժամկետ արդյունավետ համագործակցության համար:

Ներկայացումն առաջին իսկ վայրկյանից աչքի էր ընկնում իր հայկական գունագեղությամբ, ավանդույթներով ու սովորույթներով, կենցաղով ու բարքերով, ինչպես նաև ժողովրդական իմաստնությամբ: Այն համեմված էր նաև ազգային վառ երգով ու պարով, հայկական անսպառ հումորով: Այդ մասին են վկայում ծնողների, երեխաների ջերմ ու հիացած արձագանքները հետաքրքրաշարժ սյուժեի, գեղեցիկ կատարումների վերաբերյալ, իսկ էքսիկ հայկական երաժշտության միահյուսումը բացառիկ հետաքրքիր էր ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների համար:

Հատկանշական է, որ նման միջոցառումները նպաստում են ու իրենց մեծ ներդրումն ունեն հայրենիքի սահմաններց դուրս մայրենի լեզվի, հայեցի կրթության, հայկական մշակույթի ներկայացմանն ու տարածմանը ազգային ինքնության պահպանման գործում:

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից
Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց

Երեք տասնյակ գործատուներ՝ իրենց 100 հասպիքներով

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետում, Ուսանողական Խորհրդի նախաձեռնությամբ, տեղի ունեցավ Platform 360 նախագծի ներկայացուցիչների հետ հանդիպում: Նրանք ներկայացրին մարտի 16-ին կայանալիք Carrier Expo-ի մանրամասները, մասնակցության կարգն ու կոչ արեցին ակտիվորեն մասնակցել:

Expo-ին 28 խոսնակի մասնակցությամբ տեղի են ունենալու նաև պանելային քննարկումներ՝ հասկանալու մասնակիցների խնդիրները և գտնելու կարևորագույն խնդիրների լուծումը: Երիտասարդները, որոնք կմասնակցեն էքսպոյին, հնարավորություն կունենան ծանոթանալ մի քանի տասնյակ կազմակերպությունների ազատ հաստիքներին, դիմել, և ամենակարևորն այն է, որ նախագիծը կնպաստի ուսանողների համախմբմանը:

Carrier Expo-ի ընթացքում ուսանողները կկարողանան իրենց CV-ներով մոտենալ և տեղում դիմել կազմակերպություններին՝ աշխատանքի համար: Միջոցառմանը մասնակցելու է երեք տասնյակից ավելի կազմակերպություն՝ 100-ի հասնող հաստիքներով: Այս մասին ՀՊՄՀ ուսանողների հետ հանդիպման ժամանակ նշեց միջոցառման PR պատասխանատու, ՀՊՏՀ ՈՒԽ նախագահ Արև Մանուկյանը:

Էքսպոյի մասնակից կազմակերպություններից մեկի կադրերի բաժնի ղեկավար Ռոզա Գրիգորյանի խոսքով, գործատուի պահանջները մեր օրերում բավականին փոփոխությունների են ենթարկվել, և ինքը շատ ուրախ է, որ փոխվել է նաև մոտեցումն այս խնդրին, և այսօր նաև աշխատակիցն է փնտրում իր գործատուին, ընտրություն կատարում, գուցե մի շարք գործատուներից սպասում ավելի լավ առաջարկ և ունի հնարավորություն՝ ընտրելու ամենագրավիչ և հարմար տարբերակն իր համար: Գործատուն որոշ դեպքերում ուզում է ցածր վարձատրության դիմաց ունենալ աշխատակից, որը միաժամանակ կտիրապետի տարբեր հմտությունների, սակայն յուրաքանչյուրը պետք է հստակ գիտակցի, որ եթե մենք գործ ունենք ուսանողի կամ նոր ավարտած մասնագետի հետ, ապա պետք չէ նրանց առջև այնպիսի պահանջներ դնել, որոնք սկսնակ մասնագետը չկարողանա հաղթահարել:

Ուսանողների հետ հանդիպման մասնակից Գայանե Դաջունցը, որը շուկայի հետազոտության մասնագետ է, նշեց, որ որակյալ մասնագետ լինելու համար անհրաժեշտ է կրթված և բազմակողմանի զարգացած լինել, և չսահմանափակվել միայն բուհական կրթությամբ: «Պետք է մասնակցել բազմաթիվ մասնագիտական ծրագրերի: Բուհի պատերից դուրս ևս աշխարհ կա: Եթե ուզում եք լավ մասնագետ դառնալ, պետք է պատրաստ լինել շատ ճնչին աշխատավարձով կամ կամավորական սկզբունքով աշխատել, ինչն իսկապես օգտակար է և ձեր, և հանրության համար»,-ընդգծեց մասնագետը:

Ըստ նրա, ավելի ճիշտ է 23 տարեկանում ստանալ լավ կրթություն, քան աշխատել բարձր աշխատավարձով և 28 տարեկանում չլինել կողմնորոշված:

Գոհար ԹՈՐՈՍՅԱՆ
ՀՊՄՀ Լրագրության բաժնի 4-րդ կուրսի ուսանող

«Աշխարհագրությունը գիրք է, որի էջերը բացվում են ամեն քայլափոխի»

Իր կառուցվածքով և առաջադրանքների բազմաբովանդակությամբ հետաքրքիր ժողովածու, որն իր մեջ ընդգրկում է 6-12-րդ դասարանների աշխարհագրության դասընթացին վերաբերող բազմաթիվ առաջադրանքեր:

«Աշխարհագրությունը քո ձեռքերում» ձեռնարկի հեղինակները Մանկավարժական համալսարանի շրջանավարտներ Լիլիթ Նաղդալյանն ու Արտակ Սիմոնյանն են: Վերջիններս հարազատ կրթօջախում էին՝ ներկայացնելու ժողովածուն, որը ուսուցիչների համար կլինի լավագույն օգնական՝ թեմատիկ և գործնական աշխատանքներ կազմելու, իսկ աշակերտներին կօգնի ամրապնդել գիտելիքները:

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ Վարդուհի Հովհաննիսյանը հանդիպումը աշխարհագրական փոքրիկ տոն է համարում. ամբիոնում կարևորում են սերունդների կապը, երկխոսությունն ու շարունակականությունը:

Այսօր արդեն փորձառու ուսուցիչներ Լիլիթ Նաղդալյանը և Արտակ Սիմոնյանը բուհի լավագույն շրջանավարտներից են: Վարդուհի Հովհաննիսյանն ընդգծում է՝ նրանց աշակերտներն օլիմպիադաներում ցուցաբերում են բարձր արդյունքներ, իսկ որոշներն էլ համալրում Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի ուսանողների շարքերը:

Գրքի համահեղինակ Լիլիթ Նաղդալյանը հասցրել է տարբեր դպրոցներում աշխատել. իր մասնագիտական գործունեությունում առանձնացնում է հատկապես Արցախում դասավանդման շրջանը: Ներկայացնելով 3 մասից բաղկացած ուսումնաօժանդակ ձեռնարկը, որ ստեղծել է կուրսընկերոջ հետ համագործակցությամբ, աշխարհագրության ապագա ուսուցիչներին վստահեցնում է՝ գիրքը դյուրին կդարձնի դպրոցում դասավանդման գործընթացը: Գրքում ներառված են հասկացություններ, փաստեր, խնդիրներ, թեստային աշխատանքներ, քարտեզագրական առաջադրանքներ և այլն:

Արտակ Սիմոնյանը մեծ պատիվ է համարում ուսանողի կարգավիճակից դուրս հարազատ միջավայրում, սիրելի կրթօջախում հյուրընկալվելը. կառույցն իր արժեհամակարգով անջնջելի հետք է թողել կյանքում: Խոստովանում է՝ դժվար տրվեց գիտակցումը, որ այևս բուհի շրջանավարտ չէ. ավարտելուց հետո որոշեց որպես հայցորդ գիտությամբ զբաղվել կրկին Մակավարժականում:

Նա անկեղծանում է՝ լինելով երիտասարդ մասնագետ, փորձել է իր համեստ լուման ներդնել բուհի և առարկայի զարգացման գործում. աշակերտներից շատերի մեջ արթնացրել է սեր դեպի աշխարհագրությունը, նրանք էլ համալրել են բուհի ուսանողների շարքերը: «Աշխարհագրությունը գիրք է, որի էջերը բացվում են ամեն քայլափոխի»,- ասում է Արտակ Սիմոնյանն ու հավելում՝ աշխարհագրությունն առանձնահատուկ արժեք է իր համար. այն աշխարհընկալման, աշխարհաճանաչողության, միջավայրաստեղծ գիտություն է, որի միջավայրում զարգանում են մնացյալ գիտությունները:

Արտակ Սիմոնյանը հավելում է, որ սկզբնական շրջանում որոշել էին՝ ժողովածուն պետք է լինի խնդրագիրք: Արդյունքում ստացվեց դպրոցական դասաժամերի համար նախատեսված առաջադրանքներով և ուսուցիչների կամավոր ատեստավորմանը օժանդակող ընդգրկուն և օգտակար ձեռնարկ:

«Ոչ միայն հաստափոր, այլև ծանրակշիռ»,-ժողովածուի վերաբերյալ ասում է Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկանի տեղակալ Ներսես Սամվելյանը: Վերջինս նկատում է՝ թյուր կարծրատիպ կա, թե դպրոցի ուսուցիչը սահմանափակվում է միայն դասավանդմամբ: Այսօր ունենք փայլուն օրինակ, որ ապացուցում է հակառակը. գործող ուսուցիչներ, որ կրթելով, դաստիարակելով մատաղ սերնդին, ստեղծագործում են և ստեղծում մնայուն արժեք, մեծագույն հարստություն սերունդների համար:

Ներսես Սամվելյանը կարևորեց նաև, որ ժողովածուում աշխարհագրությունը ներկայացված է որպես մեկ միասնական համակարգ:

Հանդիպման ընթացքում եղավ երկխոսություն, հարց ու պատասխան:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ